

Death, գերմ.՝ Hirntod) վիճելի երևույթ մըն է: Արդեօք կարելի՞ է այդ, որպէս վերջնական մահ ընդունիլ, երբ տակաւին կը բաքախէ խնդրոյ առարկայ անհատի սիրտը եւ կենսունակ են մարմնի կարգ մը գործարանները: Այստեղ նաեւ հարց է, թէ գիտակից եղած ատեն արդեօք այդ անհատը համաձայն պիտի ըլլա՞ր մարմնի մասեր «տուող» մը ըլլալու կամ որեւէ փաստաթուղթ կա՞յ այդ առնչութեամբ:

Չանագան երկիրներ, պետական մակարդակի վրայ փոխպատուաստումի յատուկ օրէնքներ ունին, որոնց հիմամբ եւ իւրայատուկ կեդրոններու մէջ կը տնօրինուին փոխպատուաստումի հետ առնչուած բոլոր հարցերը: Օրինակ՝ ընդհանրապէս արգիւտած է մարդոց մարմնի մասերու առուտուրը, ինչ որ դժբախտաբար առկայ եղելութիւն մըն է:

## 5. **Գերհոգատարական բժշկութիւն (Intensive Medicine)**

20-րդ դարու երկրորդ կէսէն ետք, արագօրէն զարգացաւ գերհոգատարական բժշկութիւնը, որ ամենածանր հիւանդներու դարմանումը կը ստանձնէ, իրեն յատուկ *գերհոգատարական միաւորներու*<sup>(101)</sup> (Intensive Care Unit) մէջ:

Ժամանակի ընթացքին եւ գերհոգատարական բժշկութեան զարգացումով, այսօր կան տարբեր մասնագիտութիւններու համար իւրայատուկ գերհոգատարական միաւորներ, ինչպէս օրինակ սրտամկանային, ջղաբանական ու ներքին հիւանդութիւններու, ինչպէս նաեւ տարբեր վիրահատութիւններու ու երեխաներու յատուկ գերհոգատարական միաւորներ:

Շնորհիւ մասնագէտ բժիշկներու ու բուժաշխատող անձնակազմի, ինչպէս նաեւ բժշկական զանազան սարքերու, արուեստական միջոցառումներու (օրինակ՝ արուեստական շնչառութիւն, արուեստական սննդառութիւն), ազդու դեղորայքի եւ վերակենդանացման (Reanimation) միջոցառումներու, կարելի է գերհոգատարական բժշկութեամբ՝ ծանր հիւանդներու յարատեւ վերահսկողութիւնը ապահովել, զանոնք յաջողութեամբ դարմանել եւ շատերու կեանքը փրկել:

Այսուհանդերձ, գերհոգատարական բժշկութիւնը ունի (եւ պէտք է ունենայ) իր սահմանները, ուր բժշկականի կողքին իրաւաբանական, տնտեսական եւ բարոյագիտական ազդակներ իրենց որոշ դերը ունին:

Բժշկագիտական տեսանկիւնէն դիտուած, բժշկութիւնը լաւապէս գիտէ իր սահմանները ու իր կարելին կրնայ ընել, բայց ո՛չ անելին:

Բարոյագիտական տեսանկիւնէն դիտուած, գերհոգատարական բժշկութեան գլխաւոր նպատակը, ի գին կարելի ամէն զոհողութեան հիւանդներու կեանքը երկարելը պէտք չէ ըլլայ, այլ մարդկայնօրէն, տառապող հիւանդին լաւագոյն օգնութիւնը սատարելն է: Այլ խօսքով, անբուժելի հիւանդութիւն-

---

(101) **Գերհոգատարական միաւորը** (Intensive Care Unit) կարգ մը երկիրներու մէջ կը կոչուի *վերակենդանացման* (Reanimation) բաժանմունք, նկատի ունենալով շնչառութեան եւ արեան շրջանառութեան վերականգնումը: